ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 12.03.2016թ. ԹԻՎ160-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հայաէրոնավիգացիա ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

27 ապրիլի 2016
ժամը 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ
Խ. Սիսակյան ՏՏԾ պետ
Հանձնաժողովի անդամներ
Գ. Հարությունյան ԱՏԾ պետ
Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Կարապետյան

Հանձնաժողովի անդամ՝ Է. Ղանթարչյանը չմասնակցեցե նիստի աշխատանքներին:

Օրակարգ

1. ՀԱՆ-ՊԸԱՇՁԲ-01/16 ծածկագրով ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և համապատասխանող գնահատված հայտերի բացում.
2.Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.
3. Հայտարարվում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը:
4.Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում :

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց սույն ընթացակարգի նախահաշվային գինը՝ 175 000 000 ՀՀ դրամ:

Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը և գտնվելու հասցեն.
<<Monitor Soft>> LTD, հասցե՝ ՌԴ, ք. Մոսկվա, Վարշավսկոյե խճուղի, շենք 59-1

Արձանագրվեց, որ <<Monitor Soft>> LTD կողմից հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված էր համապատասխան սահմանված կարգին:

<<Monitor Soft>> LTD կողմից ներկայացված ծրարում առկա էին հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում էին հրավերով սահմանված վավերապայմաններին:

Հրապարակվեց ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը՝ 318 000 եվրո, որը կենտրոնական բանկի փոխարժեքով կազմում է 172 069 800 ՀՀ դրամ:

Արձանագրվեց, որ նշված գնային առաջարկը չի գերազանցում նախատեսված նախահաշվային գինը:

Հանձնաժողովը որոշեց

1.Սույն ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Monitor Soft>> LTD-ին և ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը՝ նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 05.04.2016թ. ժամը 11.00 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Խ. Սիսակյան		**Հանձնաժողովի նախագահ**
Գ. Հարությունյան		**Հանձնաժողովի անդամ**
Ա. Կարապետյան		**Հանձնաժողովի անդամ**